

## Կարծիք

Անահիտ Սանդրոյի Ավետիսյանի՝ «Ուսուցման գործընթացում օտարերկրացի ուսանողների ինտեգրումը Հայաստանի սոցիալ-մշակութային միջավայր»

թեկնածուական ատենախոսության մասին

Այսօր աշխարհում, գլոբալիզացիայի գործընթացում, հասարակությունը գտնվում է այնպիսի պայմաններում, որ մարդը հնարավորություն ունի ապրել, սովորել, աշխատել տարբեր երկրներում, ծանոթանալ տարբեր մշակույթների հետ, որի համար, իհարկե, պահանջվում է օտար լեզվի իմացություն: Լեզուն հաղորդակցության կարևոր միջոց է, այն ունի մեծ նշանակություն սոցիալ-մշակութային միջավայրի ինտեգրման համար: ՀՀ-ի մի շարք բուհերում տարբեր մասնագիտությամբ սովորում են մեծ թվով օտարերկրյա քաղաքացիներ, և այդ թիվը անընդհատ ավելանում է, հետևաբար, առանցքային է Հայաստանի կրթական և սոցիալ-մշակութային միջավայրում հայերենի՝ որպես երկրորդ կամ օտար լեզվի ուսուցման հիմնախնդիրը, և հենց այս հետազոտության մեջ էլ այն կարևորվում է: Սույն ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, 3 գլուխներից, եզրակացությունից, 12 աղյուսակից, 4 գծապատկերից, օգտագործված գրականության ցանկից և հավելվածից: Ատենախոսության ծավալը կազմում է 128 էջ: Աշխատանքն ունի նաև հավելված, որը կազմում է 160 էջ:

Ներածության մեջ բավականին հիմնավորված է ներկայացված արդիականությունը:

Հեղինակը նշում է, որ չնայած հայերենի՝ որպես օտար լեզու ուսուցման բնագավառում որոշակի աշխատանքներ են կատարված, սակայն ժամանակակից սոցիալ-մշակութային պայմաններում դեռ կան առկա խնդիրներ, որոնք պայմանավորված են մի շարք գործոններով, ինչպիսիք են՝

- Հայերենի՝ որպես օտար լեզու ուսուցման առանձնահատկությունների վերաբերյալ համակարգային վերլուծությունների բացակայությունը,
- բուհերի օտարերկրյա ուսանողների՝ հայերենի միջոցով Հայաստանի սոցիալ-մշակութային միջավայրին ինտեգրման վերաբերյալ հետազոտությունների ոչ բավարար քանակը և այլն:

Արդիականությունը պայմանավորված է նաև «Լեզվի մասին» ՀՀ օրենքի պահանջների կատարման, օտարերկրյա քաղաքացիների կրթության հետ կապված խնդիրների բացահայտման անհրաժեշտությամբ, սոցիալ-մշակութային միջավայրին ինտեգրման համար լեզվի կիրառական, հաղորդակցային, ճանաչողական, կուտակային ու մշակութային նշանակությամբ: Հստակ է ներկայացված հետազոտության նպատակը և դրանից բխող տրամաբանորեն փոխկապակցված չորս խնդիրները: Անկասկած է հետազոտության գիտական նորույթը: Պաշտպանության ներկայացված չորս դրույթները վկայում են անցկացված հետազոտության անհրաժեշտության և նշանակության մասին:

Ներածության մեջ բավականին հիմնավորված ներկայացված է հետազոտության տեսական նշանակությունը: Տվյալ հետազոտության առավելություններից ենք համարում ստացված արդյունքների լայն կիրառելիությունը ՀՀ բուհերում և ուսումնական գործընթացում, հատկապես տեսանելի է հետազոտության գործնական նշանակությունը:

Ատենախոսության առաջին գլուխը՝ «Լեզուն և մշակույթը՝ որպես սոցիալ-մշակութային միջավայրին ինտեգրման միջոց» բաղկացած է երեք ենթագլուխներից, որոնք միասին համակողմանի բացահայտում և ուսումնասիրում են այս գլխում ներկայացված հիմնահարցը:

Առաջին ենթագլխում՝ «Ուսուցման/ուսումնառության սոցիալ-մշակութային տեսությունները և դրանց կիրառումն օտար լեզվի ուսուցման գործընթացում», ներկայացված և վերլուծված են ուսուցման/ուսումնառության սոցիալ-մշակութային տեսությունները, այնպիսի հասկացություններ, ինչպիսիք են՝ «անձի զարգացման մերձակա գոտի», «հաջողված ուսումնառություն», «աջակցություն», «սոցիալական հարմարման գործոններ, գործիքներ»:

Ուսումնասիրելով սոցիալ-մշակութային տեսությունները՝ հեղինակը եզրահանգում է, որ կրթության գլխավոր նպատակը այնպիսի միջավայրի ապահովումն է, որտեղ սովորողները կարողանան մասնակցել արդյունավետ, նպատակային գործունեություններին և այդ գործընթացում սովորեն օգտագործել ու զարգացնել մշակութային գիտելիքներ տվյալ միջավայրին ինտեգրվելու համար: Տեսական վերլուծության արդյունքները տեսանելի դարձնելու նպատակով հեղինակը

ներկայացնում է Ռ. Թարպի և Ռ. Գալիմորի առաջադրած «Կարգավորման քառափուլ մոդելը» (Գծապատկեր 1), թե ինչպես է սովորողը այլ մարդկանց հետ փոխգործակցելու համար օգտագործում գործիքներ (լեզու, տեխնոլոգիաներ), այլոց կարգավորումից անցնում ինքնակարգավորման: Նշենք, որ առաջին ենթազխում ներկայացված բոլոր գծապատկերները (2, 3) շատ բովանդակային են ու տրամաբանորեն լրացնում և ամփոփում են շարադրված միտքը:

Երկրորդ ենթազխում՝ «Լեզվի և մշակույթի կապը օտար լեզվի յուրացման գործընթացում», բացահայտվում և ուսումնասիրվում են օտար լեզվի յուրացման համար կարևոր հարցեր, օրինակ՝ լեզվի ուսուցման և ուսումնառության ռազմավարությունները, սահմանվում են այնպիսի հասկացություններ, ինչպիսիք են՝ «մշակույթ», «մեծ մշակույթ», «փոքր մշակույթ», «մշակութային ցնցում», «մոտիվացիա»: Բացատրվում են մշակութային ցնցման պատճառները, մոտիվացիայի դերը օտար լեզու սովորելու գործընթացում: Եվ դժվար է չհամաձայնվել Ռ. Գարդների մտքի հետ, որ երկրորդ լեզվի ուսումնառության համար մոտիվացիան բանալի է: Ենթազխում կան հետաքրքիր օրինակներ, համեմատություններ միջմշակութային հաղորդակցության վերաբերյալ, օրինակ՝ Ռ.Ֆրոստի և Ե.Չարենցի ստեղծագործությունների միջև համեմատություն և այլն: Երկրորդ լեզվի յուրացմանը, ուսուցմանը նվիրված հետազոտություններից կարևորվում է Ջ.Շումանի՝ «Մշակութայնացման մոդելը» և Ս.Քրաշենի՝ «Երկրորդ լեզվի յուրացման տեսությունը»:

Հեղինակը, ընդհանրացնելով մասնագիտական գրականության մեջ տարբեր հետազոտություններ օտար լեզվի յուրացման գործոնների վերաբերյալ, վերջիններս դասակարգում է հետևյալ կերպ՝ ներքին (անհատական տարբերություններ, տարիչ և այլն) և արտաքին (սոցիալական գործոններ, ուսուցման և ուսումնառության համատեքստ և այլն):

Երրորդ ենթազխում՝ «Սոցիալ-մշակութային գործոններն ու սոցիալ-մշակութային համատեքստն օտար լեզվի ուսուցման գործընթացում», ներկայացված է «սոցիալական համատեքստ» հասկացությունը, այն ձևավորող գործոնները՝ սոցիալական հեռավորությունը, մշակութային ներուժը, սոցիալական ներուժը և այլն: Դրանք վերլուծելուց հետո հեղինակը հանգում է այն եզրակացությանը, որ սոցիալ-

մշակութային գործոններն ու համատեքստը կանխորոշում են օտար լեզվի ուսուցման և ուսումնառության հաղորդակցային բնույթը և առաջ են քաշում «հաղորդակցային դասարան» հասկացությունը՝ մանրամասն ներկայացնելով նրա ձևավորող տարրերը, առավելությունները:

Երկրորդ գլուխը՝ «Հայերենի՝ որպես երկրորդ կամ օտար լեզվի ուսումնառության միջավայրի առանձնահատկությունները», բաղկացած է երեք ենթագլուխներից: Առաջին ենթագլխում՝ «Արտասահմանցի ուսանողների հոգեբանական, սոցիալական և ակադեմիական հարմարումը», հանգամանորեն վերլուծված են հիմնախնդրին վերաբերող աշխատությունները (Վ.Տինտո, Ռ.Բեյքեր, Ա. Քենեդի և այլն): Ուսումնասիրված են մշակութային նոր միջավայրին հարմարման դժվարությունները, հարմարման ակադեմիական, հոգեբանական, սոցիալական տեսակները: Որպես ուսանողների հոգեբանական, սոցիալ-մշակութային, վարքագծային ինտեգրումը դյուրացնող սոցիալական աջակցության առանձնահատկություններ՝ ներկայացված և վերլուծված են Ս.Բուխների՝ «Ընկերության ցանցերի գործառական մոդելը», Վ.Տինտոյի «Ուսանողների ներգրավվածության՝ փոխազդեցության մոդելը»: Ըստ հեղինակի՝ այս հարցի ուսումնասիրության և վերլուծության արդյունքում ավելի արդյունավետ կընթանա ՀՀ-ում օտարերկրացի ուսանողների ինտեգրումը, ինչպես նաև ուսանողների տարաբնույթ դժվարությունների բացահայտումը և ակադեմիական սթրեսի հաղթահարումը, ընդհանուր իրավիճակի ճիշտ գնահատումը:

Երկրորդ ենթագլխում՝ «Օտարերկրացի ուսանողների մշակութայնացումը՝ և հայերենի դասավանդման առանձնահատկությունները Հայաստանի սոցիալ-մշակութային համատեքստում», ուսումնասիրված է օտարերկրացիների՝ հայերենի ուսուցման գործընթացը ՀՀ բուհերում՝ ԵՊՀ, ԵՊԲՀ և այլն: Այստեղ հեղինակը կարևորել և արժևորել է դասագրքերի, մեթոդական ձեռնարկների, ուսումնական պլանների, ինչպես նաև գիտամշակութային կենտրոնների դերն այս գործընթացում: Տվյալ հարցի վերլուծության արդյունքները ներկայացված են ենթագլխի ավարտին վեց կարևոր խնդիրների միջոցով:

Երրորդ ենթագլխում՝ «Հայկական սոցիալ-մշակութային գործոնի դերը օտարերկրացի ուսանողների մշակութայնացման, մոտիվացիայի և մտածողության

ձևավորման գործում», ներկայացված են հետազոտության համար մեծ նշանակություն ունեցող այնպիսի հարցեր, ինչպիսիք են՝ հայերեն սովորելու շարժառիթները, հայերենի լեզվամտածողության զարգացման ուղիները, մշակութային փոխներթափանցման դրսևորումները և այլն: Հարցի ուսումնասիրության արդյունքում արված է մի շատ կարևոր եզրակացություն, որ հայաստանյան սոցիալ-մշակութային միջավայրը կարևոր գործոն ու խթան է ոչ միայն լեզվակիրների հետ հաղորդակցության, լեզվական գիտելիքների ամրապնդման, այլև լեզվի յուրացման մոտիվացիայի պահպանման ու երկրի նկատմամբ բարենպաստ վերաբերմունքի դրսևորման առումով:

Երրորդ գլուխը կրում է «Օտարերկրացի ուսանողների ՀՀ սոցիալ-մշակութային միջավայր լեզվի միջոցով ինտեգրման բնագավառում առկա հիմնահարցերի բացահայտումը» խորագիրը: Այն բաղկացած է երեք ենթագլուխներից, որոնք իրար փոխլրացնում և միասին ստեղծում են ընդհանուր պատկերացում օտարերկրացի ուսանողների՝ ՀՀ սոցիալ-մշակութային միջավայրին ինտեգրման հիմնահարցերի վերաբերյալ:

Առաջին ենթագլխում՝ «Հիմնախնդրի վերաբերյալ հարցազրույցների արդյունքների վերլուծություն», ընտրված են երեք թեմաների հարցազրույցները ՀՀ բուհերում օտարերկրացի ուսանողների հայերենի իմացության գործընթացի, բուհում նրանց ակադեմիական ու սոցիալական հարմարման, Հայաստանում հայերեն ուսումնառողների մշակութայնացման փորձառության վերաբերյալ: Հարցազրույցի մասնակիցներն են ՀՀ բուհերի դասախոսները, ուղորտի մասնագետները: Կարմիր թելով անցնում է այն միտքը, գաղափարը, որ լեզվական դժվարություններն անբարենպաստ պայմաններ են ստեղծում օտարերկրացի ուսանողների համար ինտեգրվելու մեր երկրի սոցիալ-մշակութային միջավայր: Հարցազրույցի արդյունքները վկայում են, որ առանցքային են լեզվի յուրացման և սոցիալականացման հիմնախնդիրները:

Դժվար է չհամաձայնել հեղինակի այն մտքի հետ, որ առանց լեզվի իմացության անհնար է պատկերացնել սոցիալ-մշակութային միջավայրի ինտեգրումը:

Երկրորդ ենթագլխում՝ «Օտարերկրացի ուսանողների հայերենի ուսուցման արդյունավետության վերաբերյալ սոցիոլոգիական հարցման արդյունքների

վերլուծություն», ներկայացված են սոցիոլոգիական հարցման արդյունքները: Սոցհարցմանը մասնակցել են երեք հարյուր հինգ հարցվածներ: Հարցաթերթը կազմված է հինգ բաժնից՝ «Ընդհանուր տեղեկություններ», (տարիք, գրադմունք, ազգություն և այլն), «Կրթական տեղեկություններ» (հիմնականում լեզվի իմացության, կրթական տեխնոլոգիաների վերաբերյալ և այլն), «Ուսումնական հաստատություն» (զնահատել ուսումնական հաստատության տեխնիկական հազեցվածությունը, գրադարանի հնարավորությունները և այլն), «Դասընթաց» (զնահատել հայերենի դասընթացի ծրագրի վերջնարդյունքը, լսարանային ժամերի արդյունավետ օգտագործումը, դասավանդման մեթոդները և այլն) և «Հարմարում» (հարմարմանը նպաստող գործոնները, ավանդույթների, ծեսերի դերը և այլն):

Սոցհարցման արդյունքները ներկայացված են աղյուսակներում: Ենթազլխի վերջում կատարված է եզրակացություն, որտեղ Անահիտ Ավետիսյանը նշում է, որ հարցման պատասխանների արդյունքները հաստատում են այն պնդումը, ըստ որի Հայաստանի սոցիալ-մշակութային միջավայրին ինտեգրման ամենակարևոր և ամենաբարդ հիմնահարցերը լուծվում են սոցիալական և լեզվական հարթություններում:

Երրորդ ենթազլխում՝ «Հայերենի՝ որպես երկրորդ կամ օտար լեզվի ուսուցման միջոցով Հայաստանի սոցիալ-մշակութային միջավայրին ինտեգրման մոդել», ուսումնասիրված և վերլուծված է մի շատ կարևոր հարց. հայերենի՝ որպես օտար լեզվի ուսուցման շրջանառվող դասագրքերը: Ներկայացված են դասագրքերի ստեղծման հիմնական սկզբունքները, նյութերի ընտրության չափանիշները և այլն: Վերլուծության արդյունքում առաջարկվում է հայերենի՝ որպես երկրորդ կամ օտար լեզվի ուսուցման միջոցով ՀՀ սոցիալ-մշակութային միջավայրին ինտեգրվելու դինամիկ մոդելը՝ այն կազմող կարևոր բաղադրիչներով՝ կազմակերպչական, գնահատման համակարգ, կրթական բաղադրիչ, տեխնոլոգիական բաղադրիչ: Մոդելն, ըստ հեղինակի, կոչվում է դինամիկ, քանի որ այն կարելի է կիրառել տարբեր մասնագիտական դասընթացներում:

Հետազոտությունն ավարտվում է 11 կետից բաղկացած եզրակացություններով, որտեղ ամփոփված են գիտամանկավարժական հետազոտության արդյունքները: Դրանք հիմնավորված են և արժանահավատ:

Ներկայացված գրականության ցանկը բավական հարուստ է՝ հարյուր ութսունմեկ աշխատանք՝ հայալեզու, ռուսերենով, անգլերենով աշխատություններ, ինչպես նաև համացանցային աղբյուրներ:

Անահիտ Ավետիսյանի՝ «Ուսուցման գործընթացում օտարերկրացի ուսանողների ինտեգրումը Հայաստանի սոցիալ-մշակութային միջավայր» խորագրով հետազոտությունն ունի գիտական նշանակություն մանկավարժության բնագավառում ՀՀ բուհերի բարելավման գործընթացում: Այն պարունակում է նոր գաղափարներ, մոտեցումներ, ուշագրավ առաջարկներ, որոնք, անշուշտ, կնպաստեն բարձրագույն կրթության կառավարման համակարգում առկա հիմնախնդիրների նոր լուծումներին: Ավետիսյան Անահիտն իրականացրել է ամբողջական, տրամաբանորեն հիմնավորված աշխատանք:

Ատենախոսության բովանդակությունն արտացոլված է սեղմագրում՝ և հրապարակված 7 հոդվածներում: Ներկայացնենք որոշ դիտարկումներ ատենախոսության վերաբերյալ.

1. Ատենախոսության մի շարք էջերում, օրինակ՝ 20, 22, 28, 30 և այլն, կան մեջբերումներ առանց հեղինակի կողմից մեկնաբանությունների և վերլուծությունների, կամ դրանք մեկնաբանված են մասամբ: Օրինակ՝ էջ 35-ում ներկայացված է Ջ. Շումանի կարծիքը, որ երկրորդ օտար լեզվի յուրացման վրա ազդում են չորս հուզագայակյան գործոններ (վերջին պարբերություն), սակայն մեկնաբանվում են երկուսը՝ «մշակութային ցնցումը» և «սուբյեկտի խորաթափանցությունը» (էջ 36):
2. Էջ 29-ում թիվ 1-ի տակ գրված են «ներքին գործոններ», թիվ 2-ի տակ՝ «արտաքին գործոններ», սակայն հաջորդ պարբերությունում՝ Ա կետի տակ, վերլուծվում են տարիքային և այլ գործոններ, որոնք պատկանում են ներքին գործոններին:
3. Ատենախոսության մեջ կան մի շարք բացթողումներ՝ կետադրական, տեխնիկական ձևավորումների հետ կապված, օրինակ՝ էջ 28-ում (նախավերջին պարբերություն) գրված է «տե՛ս հավելված 11»: 29-րդ էջում (նախավերջին պարբերություն) գրված է «տե՛ս հավելված 4, 5»: Պահպանված չէ հավելվածների հերթականությունը:

4. Ատենախոսության և սեղմագրի մեջ կան որոշ անհամապատասխանություններ գլուխների և ենթագլուխների վերնագրերի միջև (օր.՝ 1.2, 2-րդ գ., 2.1, 2.3, 3-րդ գ., 3.1):

Սակայն վերոնշյալ դիտարկումները ամեննին չեն ստվերում աշխատանքի գիտական արժեքը:

Ավետիսյան Անահիտ Սանդրոյի «Ուսուցման գործընթացում օտարերկրացի ուսանողների ինտեգրումը Հայաստանի սոցիալ-մշակութային միջավայր» խորագրով ԺԳ.00.01- «Մանկավարժության տեսություն և պատմություն» մասնագիտությամբ մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսությունը բավարարում է ՀՀ գիտական աստիճանաշնորհման կարգի 7-րդ կետի պահանջներին, իսկ ատենախոսն արժանի է իր հայցած մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանին:

Պաշտոնական ընդդիմախոս  
Մանկ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր

Ռ.Ա. Մարդոյան

Ռ. Մարդոյանի ստորագրությունը

Հաստատում է  
Շիրակի պետական համալսարանի  
Գիտական քննադատ



Կ. Պետրոսյան